Հաշվետվություն

Ատոմային էներգետիկայի բաժնի փորձագետ Վ. Բեգլարյանի կողմից
02.02.2026-05.05.2026թթ.
ժամանակահատվածի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

1. Մասնակցել եմ Հայաստանում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման շրջանակներում ստացված փաստաթղթերի, տեխնիկատնտեսական զեկույցների և հիմնավորումների ուսումնասիրմանը, վերլուծմանը, առաջարկությունների ներկայացմանը:
2. Մասնակցել եմ Հայաստանում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման շրջանակներում նախարարության լիազորությունների շրջանակներում ձևավորված մասնագիտական խմբի, ինչպես նաև հետաքրքրություն ցուցաբերած պետությունների ներկայացուցիչների հետ աշխատանքների իրականացմանը:
3. Մասնակցել եմ ՀԱԷԿ-ի գործող էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման շրջանակներում՝ նախարարության իրավասությանն առնչվող աշխատանքների օժանդակմանը:
4. Մասնակցել եմ ատոմային էներգետիկայի բնագավառում իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքների օժանդակմանը:
5. Մասնակցել եմ ատոմային էներգետիկայի բնագավառում միջազգային կառույցների հետ տարվող աշխատանքների օժանդակմանը:
6. Մասնակցել եմ բաժնի կողմից իրականացվող փաստաթղթաշրջանառության աշխատանքների իրականացմանը, տեղեկանքների պատրաստմանը, շահագրգիռ կազմակերպություններից ստացված տեղեկատվության հավաքագրմանը:
7. Մարտի 31-ից ապրիլի 1-ը մասնակցել եմ Ֆրանսիայի Հանրապետության ատոմային էներգետիկայի բնագավառի մի շարք ընկերությունների ներկայացուցիչներից բաղկացած պատվիրակության հետ հանդիպումներին:

Ատոմային էներգետիկայի բաժնի փորձագետ՝

Վ. Բեգլարյան